ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ԵՔ- ԳՀԱՊՁԲ-18/185» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

- *Վայրը՝* *Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 224/2 սենյակ*
- *Օրը՝* *17.05.2018թ.*
- *Ժամը՝* *10:00*

Ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցների՝ իրենց որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը գնահատելու մասին

1. Ընդունել ի գիտություն, որ 14.05.2018 թվականին ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի նախատեսված տվյալների ճշտման մասին 1-ին և 2-րդ տեղ զբաղեցրած մասնակիցների մասով հարցում է կատարվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

17.05.2018 թվականին ստացվել է պատասխան՝ ըստ որի բոլոր մասնակիցների ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող, բացառությամբ.

- «ԱՍԵԴԼ» ՍՊԸ - հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ 783,404.0 (յոթ հարյուր ութսուներեք հազար չորս հարյուր չորս) ՀՀ դրամի չափով:
- «Ուտանիկ հայրենյաց» ՍՊԸ - հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ 668,176.0 (վեց հարյուր վաթսունութ հազար մեկ հարյուր յոթանասունվեց) ՀՀ դրամի չափով:

Գնահատող հանձնաժողովը որոշեց «ԱՍԵԴԼ» և «Ուտանիկ հայրենյաց» ՍՊ ընկերությունների հայտերը գնահատել անբավարար, մերժել և մասնակիցների կամ կոմիտեի կողմից նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը ներառյալ լրացուցիչ տեղեկատվություն չներկայացնելու դեպքում կիրառել ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 44-րդ կետով սահմանված ընթացակարգը:

Ընդունվել է որոշում՝ *կողմ-5* *դեմ-0*

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Հ/Հ	Ապրանքի անվանումը	1-ին տեղ զբաղեցրած մասնակցի		
		անվանումը	գնային առաջարկը	ԱԱՀ
1	Շախմատի ժամացույց	Տիգման Գրուպ ՍՊԸ	2,730,000.0	+
2	Շախմատի խաղասեղան երկու աթոռով	Բրուս ՍՊԸ	656,000.0	-
3	Շախմատի խաղադաշտ	Բրուս ՍՊԸ	1,875,000.0	-
4	Շախմատի խաղաքար	Բրուս ՍՊԸ	1,160,000.0	-

Ընդունվել է որոշում՝ *կողմ-5* *դեմ-0*

3. Գնահատող հանձնաժողովը որոշեց Տիգման Գրուպ ՍՊԸ-ի մասով ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն մասնակցի տվյալների ճշտման մասին հարցում կատարել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, ինչպես նաև նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն ծանուցում ուղարկել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ *կողմ-5* *դեմ-0*

Հանձնաժողովի նախագահ՝ *Յու.Մամիկոնյան* _____

Հանձնաժողովի անդամներ՝ *Ա.Բաղրամյան* _____

Լ.Հարությունյան _____

Ա.Գասպարյան _____

Մ.Աբրահամյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝ *Ա. Վարդանյան* _____